


ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻՒ 131

24 ՅՈՒՆԻՍԻՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ՏՕՂԱՑՈՅՑ

- Յունուար 25 † Կիր. զմ. Բ. Զկնի ուրօրէից Յայտնութեան .
- 26 Բշ. զկ. Ս. Վահանայ Գողթացուն: Եւ Գորգիոսի վկային եւ Պօղիկոսի եւ Գրիգորիսի:
- 27 Դշ. դմ. Ս. Վլասայ Եպիսկոպոսին եւ Ոնեսիմայ առակերսին Պօղոսի:
- 28 Դշ. ղկ. Պահոց
- 29 Եշ. ամ. Ս. Նւգինեայ կուսին եւ հօր նորա Փիլիպպոսի եւ ժօր նորա Կրդաւդեայ եւ Երկուց Եղբարցն Սերգեայ եւ Ապիսոնի եւ Երկուց Ներքինեաց: Եւ սրբոց վկայիցն Նւգինեոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանդիսոսի եւ Ակիւղասայ:
- 30 Ուր. ակ. Պահոց
- 31 Շք. քմ. Սրբոյն Սեղբեստոսի Հռոմայ Հայրապետին եւ Կոստանդիանոսի քաղաւորին:

նանց կախում ունենալու մեր մտքէն ու կամքէն: Եթէ երբեք կրակն այսօր կրակ՝ վաղը ջուր, միւս օրը փայտ ըլլար, փոխէր ամէն օր իր յատկութիւնն՝ անշուշտ ճշմարտութիւն չպիտի ըլլար: Նոյնպէս եթէ մեր միտքը մնար ինչպէս է ի ծնէ և չըմբռնէր իրականութիւնը, մենք ճշմարտութիւնը չպիտի ստանայինք: Այսպէս անասուններն իրական աշխարհի հետ չփման մէջ ըլլալով մէկտեղ երբեք ճշմարտութիւն չեն ստանար, որովհետեւ իրենց ըմբռնումը իրականին հետ համեմատելու կարող չեն, մէկ խօսքով՝ բանաւոր չեն: Ահա ուրեմն երկրորդ տարրը ճշմարտութեան. մտաց համաձայնութիւնը. հիմն է իրականութիւնը, որուն ծանօթութիւնը մտքին մէջ կը կազմէ նոյն իրին գաղափարը, երբ սա առարկային կը համաձայնի, կ'ունենանք ճշմարտութիւնը. «Ճշմարտութիւնն է իրին եւ մտքին համաձայնութիւնը» (Ս. Թովմաս): Այս է ստացուած ճշմարտութեան:

Ուրեմն ճշմարտութիւնը հիմնապէս ենթակայական չէ. հետեւաբար անկախ է մեր քմահաճոյքէն, ինչպէս անկախ է իրականութիւնը, իմ ուզելովս չէ որ երկաթը ճշմարիտ երկաթ և քարը ճշմարիտ քար է, ուսկից կախում ունի այդ. անկից՝ ուսկից է գոյութիւնը: Ենթակայական հիմն ընդհակառակը փոփոխական է, կարողութեան, զարգացումի, սոսորձանքերու և զանազանութեան համեմատ: Եւ իրօք ինչպէս աչքը նոյնպէս ամէն միտք՝ հաւասարապէս հեռատես չէ. մին աւելի յստակ, միւսն նուազ յստակ կը ճանչնայ իրերն, մին ամբողջովին, միւսն մասամբ. կրնայ ըլլալ որ բոլոր միտք մը բնաւ չճանչնայ, ինչպէս կոյր աչք մը բնաւ չի տեսներ: Ուրեմն ճշմարտութեան մասին եթէ զանազանութեան կողմ մը կայ՝ այն ենթակայականն է. բայց իրը կը մնայ ինչ որ է: Ասկից կը հետեւի որ ճշմարտութիւնը ենթակայական պայմաններէ զուրս ձգելու է. հետեւաբար կարծիք չէ:

Լաւ ևս հասկնալու համար այս՝ հարկ է մտաց կեանքը և գործողութիւնը ըմբռնել: Հոգին ամբողջի մը մէջ է — զգայարանքներն

ծերպեր են — ճշմարտութիւնն արտաքին առարկայից հոգւոյ մէջ պատկերացումն է. եթէ երբեք այդ պատկերն անորոշ, սղօտ, կամ որոշ գծագրուի, ըստ այնմ արտաքին իրաց ծանօթութիւնը, տարակուսական, կարծիքական կամ ստոյգ կ'ըլլայ: Յայտնի է թէ ստոյգ ծանօթութեան մէջ է ճշմարտութիւնը, որ կարելի չէ կարծիքականի կամ տարակուսականի հետ շփոթել: — Ծշմարտութեան ստացումը կրնայ արտաքին առարկայից մտքի կողմանէ իւրացումն նկատուիլ, մտքի նուշնդն է այն, կերակուրը՝ զգայական կեանքի նմանութեամբ: Այդ նմանութեան հետեւանօք կը բացատրուի անհատական տարբերութիւնն իւրացնելու մէջ իրականութիւնը: Եթէ իրականութիւնը անծանօթ մնայ, միտքը բնականաբար ստացած չըլլար այդ նուշնդը, եթէ մասամբ ստանայ և իւրացնէ կիսկատար, կամ մեծաւ մասամբ, կամ ամբողջովին, ըստ այնմ տարակուսի, կարծեաց, ստուգութեան աստիճանաւ ստացուած կ'ըլլայ իրողութիւնն և կ'ունենանք տարակոյս, կարծիք կամ ստուգութիւն: Կարծիքն ուրեմն որ առարկային որոշ պատկերացումն չէ և ո՛չ անոր ամբողջական ստացումն, չի կրնար ճշմարտութիւն ըսուիլ և ըլլալ:

Ոմանք դրականի և փորձառականի մէջ կ'ընդունին այս. իսկ տեսականին մէջ չեն ընդունիր ըսելով թէ բացարձակ ճշմարտութիւն չկայ կամ կարծիք է ճշմարտութիւնը: Բայց եթէ այսպէս ըլլար՝ աշխարհի վրայ պիտի չգտնուէր գիտութիւն, վասն զի ամէն գիտութիւն՝ նոյն իսկ դրականը և փորձառականը տեսականի կը վերածուի, քանի որ վերացական օրէնքներու և սկզբանց կը յանգին գիտական փորձառութիւններն ու ծանօթութիւնները: Թո՛ղ որ եթէ դրականի մէջ միայն ստոյգ ճշմարտութիւն գտնուէր և ոչ տեսականին մէջ, սա նուազ հիմնեալ պիտի ըլլար քան դրականը. այդ պարագային՝ զգայականը ազնուագոյն պիտի ըլլար քան բանականը ու մոռաւորականը: Դրականը հիմն է տեսականին, տեսականը դրականին ընդհանրացումն է, փորձառականին գիտու-

թեան վերացումն է, ազնուացումն է նիւթակրանին վերացումով. եթէ առաջինը հիմնեալ է իրականութեան վրայ, երկրորդն ալ նոյնպէս հաստատուն պիտի ըլլայ:

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Պ Է Ե Ի Ն Ճ Ի Պ Ա Պ

Յիսուս Քրիստոս եւմ ինոան եվլասք վէ եւմ՝ սէ Ալլահըն եվլասք քր:

(Տեվամի)

Նիհայէթ, պու Ալլահըն եվլասք իսմինն քէնտի իշուն պրդիմ կրպի եալընը թէնէպ-պրէն (adoption) սուրէթիյէ վէ եախօտ պա-զը մէշարիքէ վէրիլէն ալլահանի տէնիլիպ տէ պէօյիւք, մէշուր մագսուտ օլունսուզը մա-նասա օլմաուղընը գավիլէն իֆրամ իշուն Ալլահըն պիւր քանէնիք եվլասք օլաուղընը տա աչըգտան աչըղա թասսիգ էյլէր: Նիկոգեմու-սա շէօյլէճէ սէօյլէր «Ալլան Տիւնեայը օ սե-րեհէ սեվթի քի պիւր քանէնիք եվլասընը վեր-սի օնա» (Յովհ. Գ. 16):

Սուսուտի պիր միւքեալէմէ էսնասընտա Նիկոգեմուսա սէօյլէտիյի պու հագրգաթը Ե-րուսաղէմտէ սուրէթի ալէնիլէտէ հէր քէսէ իլան էտէրաթ: Քէնտինն միւքեալիլ էպէ-տի Ալլան էվլատը օլաուղընը, Էէտէրին մա-հիլէթիլէն միւքապի պիր մաշիլէթտէ պուլըն-աղընը օ տէրէճէ վապիւր լպարէլէլէ սէօյլէր իտի քի Նահուտիլէր տիթէրլէր, գուլագ-լարընը գաբարլար վէ օնը թաշլամապ իշուն թաշլարա միւքաճաթ էտէրլէրտի: Շէօյլէ քի Քրիստոս օնարա «Գարշընըղտա պիր չօգ իշլէր եարսըմ. հանկի իշլիմ իշուն պէնի թաշ-լայօրսուընը» տէտիյինտէ, Նէհուտիլէր հէ-ման՝ Քէնին եաբաղըն էլի պիր շէյ իշուն տէյիլ, սէն ինսան օլաուղըն հալաէ քէնտինի Ալլան իթաիլին իշուն սէնի թաշլայօրը» ճէ-վապընը վէրիյօրլար (Յովհ. Ժ. 21-37):

Մանքէմէլէրէ թէսլիմ օլունույօր, մամա-ֆիւր էթրաֆըն լէճալարը, թէհալալէրի, մին-նէթլէրի վէ նէ տէ էն աղըր ճէղանըն պիլէ

գօրգուսը օնուն լիսանընը տէյիլտիքէմէյօր: «Էյէր սէն Քրիստոս իսէն, սէօյլէ պիլէ» տէ-նիլտիլինտէ, Քրիստոս. «Էյէր սիլէ սէօյլէմիլ օլաու, ինսանայաճագարնը» ճէվապընը վէ-րիյօր: Պունուն իւզէրինէ իսխաւար «Շու հալաէ սէն Ալլահըն եվլասըն» տէյինճէ, Յիսուս, «Էվլէթ ԱԼԼԱՀԸՆ ԷՎԼԱՏԸԹԸՄ» (Ղուկ. ԺԲ. 67) տէյօր:

Խախամ պաշը պու ճէվապա քիֆայէթ էթմէյիլ, մէսէլէյի աչըգտան աչըղա օրթա-յա գօմագ իսթէր: «Ալլահըն եվլասք Քրիս-տոս սէն իսէն, քիւրի Ալլահըն իսմինէ սանա եեմին վերիլիմ պիլի սէօյլէմէլիյին իշուն» «Յիսուս տաիւր «Էվլէթ, պէն իս» ճէվապընը վէրիլ: (Մատթ. ԺԶ. 64)

Պիղատոսուն հուզուրընա կէթիլիլաիլին-տէ հագրընտաքի չիքեայէթ նէ իտի. «Պի-զիմ պիր նօմօրմըզ վար տըր վէ օ նօմօ մու-ճիպլինճէ էօլմէլի տիր, չիւնքի քէնտի քէն-տինի Ալլան եվլասք եւրինէ գօմուշ տըր (Յովհ. ԻԹ. 4, 5):

Ճէմաթ օնուն խաշ ճէգասընը պիլէ պու մանասա թէլագգը էտիյօր վէ պիլգաթ ճան շէքիլտիլ սըրատա շու մանասա իշտա իլէ շաղրըշլօր. «Հայտէ, էյէր Ալլահըն էվլատը իսէն խաշտան աշաղը էն» (Մատթ. ԻԷ. 40):

Իշլէ Յիսուս քէնտի քէնտի իշուն պու սուրէթիլէ Ալլան, Ալլահըն էվլատը, Ալլահըն սահիւր էվլատը իսմինի վէրիյօր: Պու իսմի քէնտինէ վէրէնլէրի թագալիլ իթմէլէ, միւ-քեաթաթլամապա քիֆայէթ էթմէյուպ, կիլ-լիտէ, աշիքեարտա, Նրուսաղէմին սօգազլա-րընտա, մանքէմէլէր հուզուրընտա քէնտի քէնտինէ տէ պու իսմի վէրիյօր: Պու իսմ-տէն վազ կէշմէքտէն իսէ, էօլիւմիլ թէրճիւ էտիյօր վէ պու իսմի ալտըղը իշուն էօլիւ-յօր: Պու խուսուտա շիւպիէ վէ եա թէ-րէտալիւտէ մէյտան եօղ տըր:

Էն զիյաւտէ բասիօնալիլիլիք բուհըյա մէշուն օլան իլմ վէ օնուն միւքեալէրի տալիլ պունը թաստիպ իտէրլէր: Իշլէ Սու-վատօր Ալլան եվլասք թապիլի ֆէվպ էլ տաէ ֆէրասէթլի, երեքսէք պիր իսպատէթ սահի-պի օլան քիմսէլէրէ տէլալէթ իթմէյի լւզրէ Նահուտիլէր ինսինտէ բէք չօգ իսթիմալ օլը:

(*) Տե՛ս Առձ. Գ. Տարի, Թիւ 127, էջ 822:

ներորդ: «Փագաթ Յիսուս Քրիստոս օթապիրի պու մանասա գուլլանմագը, վե շայե պու մանասա գուլլանմագը օլսայսը պու գուսար ա- զիմ պիր քեհսիրի մուհիպ օլմայանագը», տէր, վե շուհը տա իլավէ իտէր քի, «Ճէ- մաաթ արասընտա հուսուլա կէլէն մէսէլէ Յիսուսըն քէնտի քէնտիի Ալլահ եէրինէ գո- յուպ գոմատըղը մէսէլէսի իտի. պինաէն ա- լէյի իխթիյարար մէճլիսի Բէթղէհէմտէ տո- ղան վե տիւլկէր Յովսէփին օղլու պուլլընան Յիսուս անատըղ նաստան պիրի օլտուղը հալտէ քէնտի քէնտիի Ալլահ թէամիյէ էթ- մէք ճիւրթընտա պուլլընմուշ օլտուղընտան օնուլն իտամընա հիւքմ էյլէմիշ տիր»: Իշթէ շայանը միւթալէա օլան վագաա:

Փագաթ շուհը տա նազարտան տուր թութ- մամալը տըր քի Յիսուս Ալլահա խասս օլան հէր իսմի ալըյօր, Ալլահա եագըշան հէր տիւր- լիւ հիւրմէթի թալէպ վէ Ալլահա մախսուս օլան հիւքիւմէթի իճրա էտիյօր: Իշթէ մէ- սէլէնին էն ճանը նօգթասը պու տըր, չիւնքի հէր նէ գատար տա պիղիմ պահսըմըգտա ղա- յէթ վագիհ, ղայէթ մէթին պիր սուրէթտէ իֆատէ օլուհմուշ օլտուղընտան միւհատէլէ, թէրէտտիւտ միւշքիլ իսէ տէ. չօգ տէֆա պիր քէլիմէնին պիր իպարէնին Եահուտիլէր- ճէ նէ մանատա գուլլանըլտըղը հագգընտա թէրէտտիւտ վէ միւպահասա իտէպիլիւր, Հալ պու քի մէվգուը պահսըմըգ օլան խուսուս տա իշպու մէրքէղտէ տէյիլ տիր: Յիսուս եալընըգ Ալլահ, Ալլահըն էվլատընա մախ- մայօր. Ալլահա, Ալլահըն էվլատընա մախ- սուս օլան վագիֆէլէրի, իշլէրի, էն ալի էվ- սաֆը տա իւղէլինէ ալըյօր, Իշթէ պուրատա մէսէլէնին գաթի սուրէթտէ հալլի իշուլն տիպ- գաթ վէ հիւսնի նիյէթ էլ էլէ վէրմիշ տիր- լէր:

(Մապաթի վար)

ԵՐ, ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (*)

Վ. Ա. Ս Ն

յեթին ժամանակիս ազգիս մերոյ հակսոսակութեան որ ընդ միմեանս վասն Գալոպիկութեան, եւ յա- ղագս որոյ յայտնելոյ ումեմն երկրորդ ռուսաւորիյ կոչեցելոյ յոմանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն համախոհից նորին:

Արդ վասն այսմ պատճառի հատեն ար- գուհալ վէզիրին՝ մայր Աւետիք փաթրիկին եւ այլ համախոհք նորին պանդուխտք եւ ղարիպք, եւ ոչ լուաւ նոցա: Եւ ղարձեալ արգուհալ ետուն թագաւորին նորոյ, եւ նա առ վէզիրն առաքեաց զնոսա, իսկ վէզիրն ղարձեալ ոչ լուաւ նոցա, այլ արտաքսեաց զնոսա յերեսաց իւրոց: Բայց տակաւին ոչ ղաղարէին, այլ գուն գործեալ ջանան եւ ոչ կասեն, այլ մաղձատեալ ախոսան ասելով թէ՝ զերկրորդ Լուսաւորիչն մեր խնդրեմք մեք, զոր ի տարապարտուց արտասանմանե- ցին զնա. քանզի նա միայն էր վրէժխնդիր մերոց աւանդութեանց, զայս ոչ թէ միայն ղարիպք եւ օտարք ասեն՝ այլ եւ ի Ստամ- քայոցոց ոմանք քահանայք եւ աշխարհականք եւ ասեն որք ոչ իսկ գիտեն զօրէնս եւ նզով- եալք են:

Այլ այս է զի կատարեցի բան Տեառն որ ասէ. Կոյրք են կուրաց առաջնորդք, զի կոյր կուրի առաջնորդելով, երկրքեանն անկանին ի խորխորատ: Եւ ղարձեալ ասէ Տէրն. Բանգի աշխարհ զիւրն սիրէ, վասն որոյ տեսին զնա աշխարհ զի փառաւորեցեալ էր նա ըստ օրինի այլազգեաց սուտ փառք աշխարհիս, որպէս գրեցաւ ի վերոյ, վասն այնորիկ ինքեանք եւ կամին զի ընդ հովան- եաւ նորին փառամուրել, որոյ սակա ջանան զի միւս անգամ թագաւորեցուցեն զնա ի վերայ ինքեանց: Որպէս տեսին ազգն հրէից զՏէրն մեր Քրիստոս շրջեալ հետիոտս, աղ- քատակերպ եւ անինչ, վասն որոյ խորխուտ- նային նմա ասելով, դու որ աղքատ ոմն ես, որպէս տեսանեմք, ապա որո՞վ իշխանու-

(*) Տեա Արմ. Գ. Տարի թիւ 126, էջ 805:

Թեամբ նախատես և արհամարհես և խարա-
զոնաւ չուանեայ արտաքս վարես զմեզ ի
տաճարէս : Քանզի լոկ մարմին գոլով և նո-
քա , վասն որոյ և ըստ մարմնոյ միտէին , որ
և կամեցան զնա թագաւոր առնել ասէ ա-
ւետարանիչն Սուրբ , քանզի աշխարհ զիւրն
սիրէ :

Արդ մինչեւ ցայսօր ժամանակի նոյն
հրէայքն յաշխարհի գոլով և մարմին տակա-
ւին լոկ ասեն թէ Մեսիայն յորժամ եկեացէ
զինելոց է ըստ մարմնոյն և մարմնաւոր թա-
գաւորութեամբ իշխեսցէ : Բոլոր աշխարհի ,
վասն այնորիկ ոչ հաւատան Քրիստոսի , թէ
զայն զոր կարծէաք մարմնաւոր թագաւոր
լինել և տիրիլ մեզ և աշխարհի՝ նա տկա-
րութեամբ խաչեցաւ և մեռաւ : Արդ տեսնի
արդեօք զկուրութիւնս հոգեւոց նոցա : Այս-
պէս նոցին նման և սոքա զփառաւորս աշ-
խարհի կամին և խնդրեն , այսինքն զհեծ-
եալս ի ձիս ականակուռս և ընդելուզեալս
ոսկւով և մարգարտով և նստեալս ի կառս
ոսկեզօծս և նկարեալս պէսպէս յօրինուա-
ծովք : Քանզի մարմին են ապա և զմարմ-
նաւորն զիւրին գիտեն և խնդրեն : Արդ Մի-
նաս , Աստուածաբանութեան վարդապետն ,
որ փոխանորդ էր Կաթողիկոսի և ժիր գո-
լով՝ երեք ամ չըկեցաւ ի մէջ Ստամպուլու ,
ամենեւին ի ձի ոչ նստաւ , այլ հետիոտս
չըկէր անձրեւաթաց և ձիւնաթաթախ լինե-
լով , որ և տեսողաց յայսին : Բայց նոքա որ
զՍեւտիան երկրորդ Լուսաւորիչ հոչակեցին
միթէ զհամեմատութիւն ինչ գոնէ գոլին
ընդ նմա , ըստ վարուց ասեմ և ըստ բարուց
Սրբոյ Հօրն մերոյ Դրիգորի Լուսաւորչին :

Արդ զբանցի և ներսեցի եղբարք , որք
հաւանեալ էք նմա , եթէ անորոշէք , եկայ՞ք
զննեսցուք փոքր ինչ նորա վարսն և զառա-
քինութիւնսն , որ ամենեւին տարակայանայ
ի դործոց սորա որպէս զարեւելս յարեւմտից :
Տեսէ՞ք եղբարք և ի միտ առէք , միթէ Սուրբ
Լուսաւորիչն մեր գանեա՞ց զոք և բռնու-
թեամբ ի հաւատ էսմ՞ , այլ ինքն գանեցաւ
և ոչ գանեաց զոք , չարչարեցաւ և ո՛չ
տանջեաց զոք որ զգեցեալն էր զգորութիւնս
Աստուածային , և սովաւ կարէր առնել զոր

և կամէրն . բայց ումք զվնաս ինչ ոչ ա-
րար , այլ անդադոր աղօթէր առ Աստուած
վասն փրկութեան մարդկան . և սոքա մինչ
եօթն և ութ նաեւ տասն ժամս գինւով ար-
բենան . թող զայլսն : Դարձեալ ի Սուրբ
ժողովն Նիկիոյ ոչ էջ ինքն , զի մի՛ փառա-
ւորեացի ասէ ի մարդկանէ , այլ փոխանակ
իւր զորդին առաքեաց , և ի հայրապետական
իշխանութեանն ոչ եկաց զի մի՛ փառաւորես-
ցի , այլ ի լերինս , յայրս և ի քարանձաւս
առանձնանայր սովով և ծարաւով , և սոքա
բռնութեամբ զքսակս այլազգեացն լցուցա-
նելով զիշխանութիւնս ի ձեռաց ծերոցն յա-
փշտակեն և զզանազան բարուրս ի վերայ
նոցա արկանեն , զի իւրեանք զիշխանու-
թիւնս նոցա յերկարութեամբ վարեսցեն :
Բայց եթէ զայս պատասխանեսցեն մեզ ա-
սելով՝ զի թէպէտ աս ձեռովն և վարուքն
նորա սրբութեանցն ոչ համեմատիւր՝ սակայն
զխխայթեալ և զկործանեալ զօրէնս և զկա-
նոնս ի նմանէ հաստատեալս՝ վերստին ուղ-
ղեաց : Արդ ասացէք մեզ զոր հարցանեմք
«զՍուրբ Լուսաւորչի զո՞ր օրէնադրութիւնս
պահեաց ինքն և ապա ուսոյց պահել այլոց ,
թողում ամբլ չնորոգելն և չուղղելն : Եւ
կամ ո՞ր կանոնք նորա իցէր քանդեալ , որ
սա վերստին կանգնեաց , Դոնէ զմին ցուցէք
ինձ : Այլ որպէս Սրբազան Առաքեալն Քրիս-
տոսի Պօղոս ասէ . Ո՛վ օրինապահ կեղծաւոր
որ ասես այլոց չգողանալ , իսկ դու զմեհեանս
կողոպտես , ամին նման և զայլսն իմա : Զհա-
ւատս հաստատեմ ասեմ ասես , զի մի՛ զոս-
թուլիկք լինիցին , լաւ . ապա ջանաս զքրիս-
տոնեայս քրթացուցանել , որպէս թուրքա-
յուցեր զոմանս ի քաղաքն Կարին և ի Սե-
բաստիա : Արդ բացէ՛ք զհոգւոյ աչս ձեր և
ի միտ առէք ո՞վ թշուառականք զի մի՛ ընդ
նմա ըմբռնեալիք ի դատաստանէն Աստուծոյ :
Տեսէ՞ք զի՛նչ հրամայէ Քրիստոս . Տէրն մեր ,
եթէ , ասէ , զայթակղեցուցանէ ոք զմի ի
փոքրկանցս յայսցանէ որք յիս հաւատան ,
լաւ էր նմա ասէ եթէ կախիցէր զպարանոցէ
իւրմէ զերկանաքարս՝ և անկանիւր ի ծով :
Արդ ո՞ւր մնաց արդեօք Պատրիարքութիւն
նորա , ո՞ւր մնաց եպիսկոպոսութիւն , ո՞ւր

մնաց վարդապետութիւն և ո՛ւր մնաց քրիստոնէութիւն ի նմա: Դարձեալ (իւրաքանչէր) զմեզ Տէրն մեր և ասէ, եթէ գայթակղեցուցանէ զքեզ ակն քո, այսինքն առաջնորդն քո՝ իւրեա՛ զնա ի բաց, և եթէ գայթակղեցուցանէ զքեզ ձեռն քո՝ հա՛տ զնա ի քէն, այսինքն վարդապետն քո կտրեա՛ զնա ի քէն, զի ոչ է նա վարդապետ և խրատիչ, այլ գայթակղեցուցիչ և թուրքացուցիչ: Դարձեալ զգուշացուցանէ զմեզ Քրիստոս Աստուած մեր ասելով. Զգոյշ լերուք անձանց զի գայցին ասէ առ ձեզ հանդերձիւք ոչխարաց և ի ներքոյ են գայլք յափշտակողք: Արդ եթէ ոք ասիցէ ի ձէնջ, թէ զիսոյ՛ կարիցուք ճանաչել զնոսա, եթէ արդեօք գա՞լք իցին ի ներքոյ, որովհետեւ զներքինսն ոչ կարեմք տեսանել այսու աշօք, այլ զարտաքինսն տեսանալք, իսկ որք իրիւ զոչխարս են և զսար զգնունն ապա տե՛ս եղբայր ո՛րպէս գեղեցիկ ուսուցանէ մեզ Տէրն մեր առ այս ասելով եթէ՝ «ի պտուղս նոցա ծանիջիք զնոսա», արդ տեսե՛ր արդեօք, գործովն ճանաչէ զնա ասէ Տէրն մեր թէ այր Աստուծոյ իցէ նա: Արդ տո՛ւք ինձ զպատասխանի, քանզի ահա երկու ամ եղեւ որ նա և նոքա եկին ի քաղաքս Կ. Պօլիս, զի՞նչ պտուղս բարութեան ցուցին մեզ, հա՛ւատոյ տեսե՛մ կամ գործոյ. զի՞նչ պտուղս Աստուածապաշտութեան և զի՞նչ պտուղս առաքինութեան տեսաք ի նոսա. ապաքէն և ո՛չ մի: Այլ որպէս ասէ ոմն ի մերոց սրբոց վարդապետացն թէ բարք մարդկան հա՛կաւակասէրք են և զէսն իմն ինդրեն. և հըպարտացեալք ի վերայ իրերաց հարեալք ի նախանձութենէ՝ յատելութիւն և զհաստատեցեալ սէրն որ ի Քրիստոսէ քակեն և քայքայեն և զմի գլխոյն Քրիստոսի զհօտն այսինքն զազգս Հայոց օձտեալ ի միմեանց փերեկսեն, և այն վասն աշխարհական փառաց պատառաց և կաշառաց: Վասն որոյ տալոց են զհամարս առ այն՝ որ դատէ առանց աշխուրթեան զամենայն ոք, ըստ գործոց իւրեանց զորս գործեցին: Քանզի ոչ այլ ինչ օգտեցաք յայսմ կռոյս՝ եթէ ոչ զմեծամեծ մեղս, առաջի Տեառն Աստուծոյ, այլ և

զնախառնիս ի դրացեաց մերոց, այսինքն յօտայ տղգաց: Մինչ գրեթէ ծաղր և նախատինք եղեաք ամենայն տղգաց քրիստոնէից, մանաւանդ տաճկաց և հրէից: Քանզի տաճկացն զչար յիշոցս առեալ մեզ անէին. ազգն Հայոց զհաւատն իւրեանց կորուսեալ են և ֆռանկ եղեալ, և զարձեալ գաթուղիկ և ֆրանսրզ, ինկիլիզ և ֆիլամէնկ անուամբք ձայնէին զկնի Հայոց:

Դարձեալ ասէին թէ անհաւատք, որովհետեւ կորուսեալք էք զհաւատս ձեր, որ ոչ է իսկապէս հաւատ, վասն որոյ եկեալ տաճկացէք, զի ճշմարիտ հաւատս ստացեալ լինիցիք: Արդ այս նախատինք և հայհոյութիւնք ո՛չ ապաքէն առ Քրիստոս վերանան, արդ այսու ամենայնիւ զամօթի հարաք զզրուին մեր զՔրիստոս, զկեանքն և զկենսոտաւն մեր: Միթէ բաւական չէ՞ր նմա որ ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ առաջի երից զառաւորաց նախատեցաւ վասն մեր և վասն մերոյ փրկութեան: Միթէ պակսո՞ ինչ մնացեալ էր ի նախատելոց, որ մեք կրկին պատճառ եղեաք նախատել և. հայհոյել նմա յանօրինաց, որ յազապս այսորիկ տուաք հայհոյել զամենատուրք և զսարսափելի զանունն նորա: Առաջ և. յոյժ աւա՛ղ քան աղէտիս, և ո՛հ մեծի կուրութեանս մերոյ, որ յոչինչ պէտս լանալովն լինելով վարդապետքս առ վարդապետս, եպիսկոպոսքս առ եպիսկոպոսս, քահանայքս առ քահանայս, և ժողովուրդքս առ միմեանս, և վասն այնորիկ զանալպանելի սնունն ամենամեծին Աստուծոյ տուաք ալպանել, անարգել և հայհոյել հեթանոսաց, որպէս ասէ Աստուած մարգարէին թէ սնունն իմ վտան ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց, վասն որոյ ողբասցէ զմեզ Մարգարէն Երեմիաս՝ որպէս զհինն. Իսրայէլ՝ հանդերձ ալլովք մարգարէիւք: Ողբասցէ զմեզ վէմն հաւատոյ և երեսփոխանն Քրիստոսի հանդերձ իւրով առաքելովք, վերոսին նորոգեալէ այժմու զողբերգութիւնս իւր ի վերայ ազգիս մերոյ, որպէս յայնժամ ի վերայ հարցն մերոց ողբաց և զսուգ էառ մեծ հայրն մեր Մովսէս Խորենացին: Սուգ առցէ ի վերայ մեր վասն

թշուառութեան ազգիս մերոյ մեծ Իսահակ Ս. Հայրապետն մեր, որ փոխանակ նորա ընկալան ի վերայ ինքեանց ազգս մեր զԲրդիօ ասորին եւ զՍորմակ, քանզի այնպէս յիմարացեալ ամենեքեանս եւ կարի տգէտ եղեաք, ոչ զսնազանհով զմարդս եւ զանառունս ի միմեանց. ոչ ջոկելով զազուաւս եւ զաղանիս եւ ոչ ճանաչելով զգալս իրեւ զոչխարս, մանաւանդ ընդգրկեցաք զգալս իրեւ զոչխարս: Այնպէս խելագարեցաք որ զարջն պահապանս կացուցաք յայգւոյն Տեառն, եւ զդժնիկն՝ առաջնորդ եւ այն առ ի կիզել, խայթել եւ ի խոցոտել զմեզ, եւ այնուհետեւ կիզել, այրել, այրել եւ նճիւն դարձուցանել զժողովուրդսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

(Շարունակելի)

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Շար.)

9. Բայց այսօրուան խորհուրդը փառաւոր է Յիսուսի Քրիստոսի համար իր ընդունած երկնային վկայութեանց պատճառաւ. անգին է մեզի համար՝ մեծ խորհուրդ մը հաստատուելուն պատճառաւ: Վասն զի, կ'ըսէ Ս. Մաքսիմոս, գիտէ՞ք ինչո՞ւ համար նոր մարդն այսօր սկրտուեցաւ. նոր մկրտութիւն մը իբրեւ խորհուրդ մեր օգտին համար հաստատուելու նպատակաւ. այսինքն այսօր Տէրն մեր իր մկրտութիւնովը հաստատեց մերն ալ. այն անձառելի խորհուրդը՝ որ ընդունողներուն կը հաղորդէ անպիս արդիւնքները իր կենաց եւ մահուան զոհին սր կը քաւէ ու կը ջնջէ ամէն մեղք: Որովհետեւ ինչպէս որ վերջին ընթրիքի ատեն զոհութեան զոհովը կանխեց Գողգոթայի զոհը, այսպէս ալ Յորդանանու մէջ ջուրով լուացուելովը կանխեց իր արիւնով լուացուելու խորհուրդը, եւ արդիւնքը մերձեցուց մեր մկրտութեան ու ապահովեց արգասիքը:

Վասն զի ներկայ պարագայիս մէջ ի՞նչ կը դիտենք մենք Յորդանանու գետին վրայ,

նախ՝ Յիսուս Քրիստոս իր ամենասուրբ մարմինը կը լուայ ջրով: Արդ՝ ուրիշ բան չէ այս լուացումը, կ'ըսէ Ս. Ամբրոսիոս, բայց եթէ հանդիսաւոր եւ աստուածային սրբօգործում մը զոր կը կատարէ այսօր Տէրն մեր ջրոյ տարրին վրայ որպէս զի մեր Մկրտութեան ծառայէ իբրեւ նիւթ: Այո՛, այսօր Տէրն մեր կը սրբագործէ բոլոր ջրերը, զանոնք կը մաքրէ եւ զանոնք կը բարձրացնէ ամենալսեմ գործածութեան բոլոր ժողովրդոց հոգեւոր լուացումը կազմելու, որ անոնց վրայ կը զեղու շնորհքը: Մտիկ ընենք նաեւ մեծ Ս. Օգոստինոսին, որ նոյն խնդրոց մասին այսպէս կը խօսի. Ս. Դրոց մէջ կը կարգանք թէ Հրեաները զանազան լուացումներ ունեցան հին օրինաց ատեն, բայց ան լուացումներէն եւ ոչ մէկը կրցաւ ընդհանուր եւ ազգու գեղ ու դարման մատուցանել մեղքի պատճառած ակտերուն դէմ (ճառ 29 զժաման.): Ի՞նչ ըրաւ ուրեմն Տէրը, Յորդանանու մէջ Մկրտութիւնն ընդունելով՝ նուիրագործեց այն ջրերը բոլոր մարդոց վերանորոգման եւ դարմանումին համար:

Եւ որպէս զի բոլոր մարդիկ կարենան մասնակցիլ Մկրտութեան խորհուրդին, գրտնուելով այն խորհուրդը բոլոր աշխարհիս վրայ, Փրկիչը միակ եւ եզակի գթութեան ցոյցով մը Յորդանանու ջուրը մտնելովը բոլոր արեգեքի ջուրերուն իր օրհնութիւնը տուաւ: Ո՛հ սքանչելիք ամենակարողութեան եւ շնորհաց. Տիրոջ Աստուածային մարմինը կը թրջուի ջուրերէն, եւ ջուրերը կ'ապնուան նա՛ն ու կը հարստանան. այն աստուածային մարմինը բան մը չ'առնուր ջուրերէն, բայց ջուրերը աստուածային մարմինէն կենսական եւ աստուածային զօրութիւն մը կը ստանան. ասոր համար այն բարեբախտ ջուրը զարնուրած ու ապշահար կը մնայ տեսնելով որ իր ալեաց մէջ կը զիջանի մտնել իր յաւիտեանակա՛ր: Աղբիւրն կենաց եւ իր նոյն իսկ Արարիչը: (Ինչպէս գեղեցիկ կերպով կը գեղգեղէ նաեւ մեր Դրիգոր Կաթողիկոս ջրօրհնեաց Ո՛վ զարմանալի Յորդորակին մէջ. —

Յորդանան լուեալ փախսական դառնայր. Վսակ առ վսակ պաւգամաւոր լինէր:

Գե'ս, մի՛ զարհուրիք քո տառախն եմ ես.

Եկեալ մկրտիմ եւ լուսնամ գլեղա):—

Դարձեալ ուրիշ տեղ մը՝ կ'ըսէ միեւնոյն Մեծ Վարդապետն Եկեղեցւոյ, սքանչացմամբ դիտենք աստուածային խորհրդոց ներդաշնակութիւնը. այս միեւնոյն Մարգարեալն Աստուած այսօր մաքուր ջուրի մը մէջ կը մտնէ, որուն վրայ կը սքանչանանք, եւ կը հաւատանք որ ամենամաքուր Մօրմէ մը ծնած է. հիսնալի՛ փառք մեր Սուրբ Հաւատքին, երկու հրաշքներուն մէջն ալ: Մարիամ զայն ծնանելէն վերջը կոյս եւ անբիծ մնաց, եւ բարեբախտ ջուրն՝ զայն լուսալէ յետոյ սրբացած ու մաքուր մնաց. թէպէտեւ կերպով մը կրնայ ըսուիլ թէ՝ ջուրը նոյնիսկ Մարիամէն աւելի շնորհաց առատութիւն ստացաւ: Մարիամ իր ողջախոհութեամբը եւ անբծութեամբը միայն իրեն համար արգիւն հաւորեցաւ, ջուրը՝ այսօրուան ստացած իր սրբացմամբը կարող կ'ըլլայ բոլոր մարդիկը սրբացնելու: Մարիամ շնորհք ընդունեցաւ ինաւ երբեք չմեղանչելու. ջուրը՝ զօրութիւն կ'ընդունի բոլոր մեղքերը ջնջելու: Մարիամ կուսութեան պարգեւը ընդունեցաւ. ջուրը այսօր հրաշալի արգասաւորութիւն մը կը ստանայ: Մարիամ ծննդաբերութենէ վերջը՝ անբիծ կը մնայ, բայց մէկ հատիկ զաւակ մը միտնի կը ծնանի: Մկրտութեան ջուրը՝ շատեր վերստին կը ծնանի եւ միշտ կոյս է: Մարիամ՝ միայն Յիսուս Բրիստոս զաւակն ունի: Մկրտութեան ջուրը բոլոր մեղովրդոց բախտաւոր մայրն է: Ս. Օգոստինոս դարձեալ կ'ըսէ. Ո՛վ պեղեցիկ եւ սիրալիւր կարգադրութիւն ուրեմն աստուածային գթութեան: Ս. Պօղոս առաքեալին ըսածին համաձայն, ինչպէս որ մենք ծնանելէն առաջ Ադամով մեղանչեցինք, այսպէս ալ այսօր Յիսուսի Բրիստոսի հաստատած մկրտութիւնով՝ աշխարհք պալէն առաջ՝ Յիսուս Բրիստոսով կը լուսացուինք մեղքէն ու կ'արդարանանք. վասն զի այսօրուան Յիսուսի Բրիստոսի ընդունած մկրտութիւնը ասոր մէջ կը կայանայ թէ՛ նա ճիշդ այսօր սրբագործեց ջուրերը՝ որ պիտի ծառայէին աշխարհքը սրբազործելու եւ թէ միայն ջուրը չէր որ լուսաց

մեր Տէրը, որքան Տէրն մեր զջուրը լուսաց սրբագործման բոլորովն նորահրաշ և փառաւոր գրութեան միջոցաւ:

10. Երկրորդ՝ գեա ի՛նչ կը նշմարենք Յորդանանու գետին վրայ: Ս. Ֆաւճէնյիոս կ'ըսէ Ամենասուրբ Երրորդութեան՝ մեծ, խորիմաստ եւ ամենաբարձր խորհուրդին առաջին անգամ աշխարհիս յայանուիլը եւ մարդոց մինչեւ անգամ զգայտարանքով ճանչցուելիք կերպով ցուցադրուիլը կը տեսնենք. որովհետեւ Հայրն Աստուած իր ձայնովը լսուեցաւ, Որդին Աստուած մարդկութեամբը տեսնուեցաւ, Հոգին Սուրբ Աստուած ալ աղանձակերպ երեւցաւ:

Բայց ինչո՞ւ համար արգեօք Յիսուսի Բրիստոսի մկրտութեանը առթիւ կ'ըլլայ այս փառաւոր աստուածային Յայտնութիւնը. այս պատճառաւ, կ'ըսէ Ս. Պետրոս Ոսկիաբանը թէ՛ ինչպէս որ զմեզ ստեղծած ատեն երեք աստուածային Անձերն ալ մասնակցեցան, նոյնպէս ալ զմեզ փրկող խորհուրդին հաստատութեան զիջանելու գործին մէջ կը տեսնենք երեք անձանց մասնակցիլը, եւ ինչպէս իրարու մէջ ըսին. Արաւցուք. ինձնք. նոյնպէս ալ կարծես թէ հիմա կ'ըսեն. Փրկեսցուք. փրկենք:

Եւ իրօք երեք աստուածային անձերը մասնակցեցան այս մեծ դարմանիչ գործին, կ'ըսէ Ս. Մաքսիմոս վասն զի մինչդեռ Որդին Յորդանանու մէջ մկրտուելու յանձնառու ըլլալով՝ կը կատարէ խորհուրդը, Հոգին Սուրբ կը սրբայնէ խորհուրդը, հայրն ալ ճշմարտութիւնը կը հռչակէ: Յիսուսի Բրիստոսի Մկրտութեամբ մենք կը ստանանք Հօրը կարողութիւնը, Որդւոյն իմաստութիւնը, Հոգւոյն Սրբոյ անմեղութիւնը: Հայրը մեզի կը պարգեւէ յաւիտենականութեան, Որդին իր նմանութեան, Հոգին Սուրբ լրութեան եւ Աստուծոյ որդւոց ազատութեան պարգեւը: այնպէս որ Հօրմէն կը ստանանք մեր գոյութիւնը, Որդւով կ'ապրինք եւ Հոգին Սուրբով կը գործենք ու շնորհաց հոգեւոր կեանքին մէջ կ'աճինք:

Դիտեցէք սակայն որ երրորդութեան այս զգալի յայտնութիւնը կը պատահի ճիշդ Փրկչին անբիծ մարմնոյն Յորդանանու ջրե-

բէն թրջուած տեղը: Ուրեմն ահաւասիկ կը կատարուի Մկրտութեան մեծասքանչ հաստատութիւնը, կ'ըսեն Մեկիւնները: Ինչու որ Տէրը երբ հաւանեցաւ որ ջուրերը թրջեն իր աստուածարեալ մարմինը, նոյն ատեն ընտրեց եւ նուիրագործեց ջուրը իբրեւ նիւթ Մկրտութեան: սրբազնասուրբ Երրորդութեան զգալի յայտնութեամբն ալ սրտեց ձեւը: Ստոյգ է թէ Տէրն մեր այս պարտաւոր չխօսեցաւ, բայց Երրորդութեան երեւման պահուն ջրոյն մէջ լուացուելովը, եթէ ոչ խօսքով, նոյն իսկ գործքովը հաստատեց այն ատեն Մկրտութեան խորհուրդը, քանզի հաստատութիւնք ոչ միայն խօսքերով, հապա նա' եւ պարզ գործքով ալ կ'ըլլան:

Ասոր համար, այն պահուն Աստուծոյ ձայնը ստուգիւ լսուեցաւ ջուրերուն վերեւ, եւ անոնց պարգեւեց վերստին ծնանելու սրբայման մաքութիւնը ասուող շնորհաց՝ սիրոյ մեծփայլչութեան զօրութիւնը: Ձայն Տեառն ի վերայ ջուրց, Ձայն Տեառն զօրութեանց, Ձայն Տեառն մեծփայլչութեան: Դարձեալ անոր համար Մարգարէն իրաւամբ ըսաւ, ինչպէս գիտել կուտայ Ս. Պետրոս Ոսկեխօսը, ձայն Աստուծոյ ի վերայ եւ ոչ թէ ի ներքոյ ջուրց: քանզի Յիսուս Քրիստոս չժառանցեց եւ չենթարկեցաւ իր Մըկրտութեանը, հապա՝ հրամայեց եւ կը հրամայէ տակաւին աստուածային իշխանութեամբ եւ խորհուրդ մը սահմանեց:

11. Բայց, որպէս զի այս փառաւոր հաստատութեան բան մը չի պակսի, ոչ միայն նիւթն ու ձեւը, այլ նաեւ արդիւնքն եւ անոր վախճանը զգալի կերպով ցուցադրուած է: Ինչու որ Հոգին Սուրբ աղանակերպ կ'երեւայ՝ խորհրդանշան խաղաղութեան եւ սիրոյ: եւ ըզրոյ թռչուններէն աւելի սպիտակագոյն, ամենէն աւելի անմեղ, ամենապարզ, ամենաձեղ եւ ամենաբեղունը: Արդ՝ ասոր հետ մէկտեղ ուրիշ ինչ բան մեզի ցուցադրուած է: Բայց եթէ Հոգին Սուրբ, որ Մկրտութեամբ մեր վրայ կ'իջնէ, զմեզ Աստուծոյ հետ կը հաշտեցնէ եւ անոր սիրելի ու հաճելի կ'ընէ: մեր հոգիները մեղքէն կը մաքրէ, եւ զմեզ անմեղութեան ցոլա-

ցումովը մաքուր եւ սպիտակափայլ կը հանդիսացնէ: մեզի կը պարգեւէ քրիստոնէական պարզամտութեան եւ հեղաթեւոն ոգին: զմեզ շնորհաց գանձերով կը ճոխացնէ, որով մենք արդիւնքներով եւ առաքինութեամբ կ'արգաստուորինք: Այս պատճառաւ Եկեղեցին եւ ամէն ճշմարիտ հաւատացեալ հոգի՝ Սուրբ Դրոց մէջ կը կոչուի Աստուծոյ միակ հաճելի, պեղեցիկ ու սիրուն Աղանակն: Բոլոր զի վէմին ձերպերուն մէջ պահուած է, այսինքն Յիսուսի Քրիստոսի ամենատիրելի վերքերուն մէջ, ուրկէ կը բլխի արիւնը որ զայն կը լուայ ու կը մաքրէ սուրբ խորհուրդներով (Երգ երգոց, Ա. Կորնթ.):

Ասկայն, մինչդեռ աղանակն Յիսուսի Քրիստոսի վրայ կ'իջնէ, նոյն ատեն երկինքը կը բացուի անոր գլխուն վերեւ, եւ անով մեզի հասկնել կ'ուզէ, կ'ըսէ Ս. Օգոստինոս. Մկրտութեան ամենամեծ եւ ամենաթանկագին արդիւնքը, այսինքն երկինքը, որ՝ հեթանոս մարդուն համար փակուած էր, կը բանայ իր դռները Մկրտութիւնով քրիստոնէայ եղող մարդուն եւ զայն իր ընտրելին ու ժառանգորդը կ'ընէ: Սուրբ Թովմաս ալ կ'աւելցնէ թէ՝ այս երկնքի բացուիլը որ Մկրտութեան հաստատութեան կ'ընկերանայ, կը նշանակէ թէ Մկրտութեամբ մարմնեղէն եւ երկրաւոր մարդը՝ երկնային եւ հոգեւոր կը դառնայ: եւ կանչուած է, ու գրեթէ ձեռքէն բռնելով երկինքը ժառանգելու առաջնորդուած է: Միեւնոյն Աւետարանիչը գիտել կու տայ դարձեալ թէ Տիրոջ Մկրտութեան ատեն երկինքը ոչ միայն անոր վրայ՝ հապա Անոր համար բացուեցաւ, մեզի հասկնելու համար թէ այս շնորհքը որ մեզի երկինքը կը բանայ, միայն Յիսուս Քրիստոսով կը ստացուի: կ'ըսէ Այսարիաւ: (Շարունակելի)

Դոմիթ հրաճարակուող «Յուսաբեր» քերթէն կ'արտասուէ՝ հետեւեալը:

Պ Է Յ Ր Ո Ւ Թ

Յովորդ աստու ես ե ինծի ընկեր ունեցած մեր եղբայրահայ «Հերոս» ու կղերատեաց բարեկամը, (Պէյրուսթի) հայ-կաթողիկէներու Առաջնորդարանին այցելութիւն մը ընելու կ'երթանք: Առաւօտեան արեւ-

ըին ժամերէն ոգտուելով եկեղեցին կը հանդիպինք նախ Սիրուն եկեղեցի մը: Սովորական թիւ պատուարազը կատարուած ժամանակ՝ խորանին աջ կողմը, Prie-Dieuի մը վրայ ծնրադիր, երիտասարդ, աղուամագ, պզտիկ մօրուքով, վայելչագէտ ու խոհուն երեւոյթով վարդապետ մը ուշադրութիւնս գրաւեց: Կէս ժամ վերջը միեւնոյն համակրելի մարդն է որ մեզ կ'ընդունէ նորաշէն ու խիստ փառաւոր Առաջնորդարանի մեծ սրահին մէջ: Այս սրահը մէկ երկու անգամ, ազնուաբար արամադրուած է տեղւոյն ամբողջ հայութեան ազդային հաւաքումներուն: Մեր խօսակցի վարդապետը Բերկացի է, հաւանօրէն արարախօս բնուանիքի վաւակ: Զմամուի նորընծայ, ուսեայ, լեզուագէտ, զարգացած՝ բառին բովանդակ առումով: Հայերէնը Զմամուի վանքին մէջ ուղլած է: Իր երիտասարդ տարիքէն կ'օգտուէր զինքը կուսակրօնութեան անպատեհ հաւթիւններուն մասին հաշտեցնելու համար. առանց ու եւ հիմնական պատրաստութեան, կուտ փաստերու, ու լոկ մեր աշխարհական մարդերու ապրելակերպն ու ընտանեկան մեզի գէնք ունեցած:

— Կուսակրօնութեան մասին ի՞նչ դադարաբար ունիք, վարդապետ, ժամանակը հասած չէ՞ արդեօք որ իրաց այդ անբնական վիճակը փոխուի:

— Կուսակրօնութիւնը, կը պատասխանէ երիտասարդ վարդապետը, եկեղեցական օրինաց էական պայմաններէն չէ՝ բայց քրիստոնէական վսեմ մէկ խեղալը կը կազմէ, ինչպէս անձնագոհութիւնը քաջարի զինուորին համար, և խիստ նպատակայարմար եկեղեցական շահերուն տեսակէտով:

— Բայց կուսակրօնութիւնը բնութեան հակառակ բան մը չէ՞ վարդապետ:

— Բայց մարդուն կամքը շատ վեր է, պարանոնք բնութիւնէն ալ: Մարդիկներուն կը քնայ միայն զինուորի, միշտ զինուոր վստահներուն գէտ: Վարժութիւնը, մաքուր կենցաղը, շինիչ ընթերցանութիւնները, աղօթքը, ինքնին մեծ բաներ են:

— Սոք երիտասարդ տարիքին մէջ, վարդապետ...

— Այո՛ պարանոնք, և գարմանալու ոչինչ կայ հոն: Ազատ կամքովս է որ ընդունեցի այդ գերը ինքզինքս երկար տան փորձելէ և կշռելէ յետոյ: Այդ կարծէք որ այս եկեղեցականի սքեմը հագած եմ՝ առանց խորունկ ինքնագիտակցութեան, վանքի մը կեանքէն ներշնչուած. ո՛չ ես ալ ձեզի պէս կարդացած եմ՝ փիլիսոփայական գրքեր, և հարեւրաւոր հեղինակներու գործերը, ու յետոյ այս որոշումը առած: Գուք եկած էք ինծի հետ վիճարանելու ձեզի թերեւս օրինակ ունեցած Լուսաւորչական Հայոց քահանաները, որոնց քով կրօնաւորի շնորհք չէ մնացած. տիրացու, խանութպան ու ու եւ թերուս մէկը քահանայ կը գտանայ հոն երբ և կ'ամի, առանց երկար պատրաստութեան, առանց կառուի. և ի՞նչ օրինակ կ'աւանդէ անոնք իրենց Ժառանգաւորաց վարժարաններուն մէջ, իրենց նոյն իսկ գլուխներէն: Արք քահանաները կ'ամուսնանան ու գաւաթներու տէր կ'ըլլան,

անոնք ի՞նչպէս կրնան անձնաւորաց ըլլալ, իրենց շահերուն չի հետապնդել, ստորնութիւններ չի գործել, չի քծնիլ աղաներու առջեւ: Աշխարհական դառնալու, աշխարհականներու հաճելի ըլլալու ձգտում մը ունին անոնք այսօր, և ասիկա իրիտ ցաւայի արդիւնքներ պիտի ունենայ հայ եկեղեցւոյ համար՝ եթէ արդէն ունեցած չէ: Փորձեցէք անգամ մը, անոնց հետ ու եւ կրօնական ինքրոյ մասին վիճարանութեան մտնել ու տեսք թէ անոնք ճիշդ մը պիտի ընեն ընդդիմաբօսը համոզելու համար, ամառանդ այսօր որ սկիզբակրութիւնը ողբայի համեմատութիւններ առած է հայ երիտասարդութեան քով: Հայ եկեղեցականները թող շնորհակալ ըլլան որ իրենք այդ փառքն ու պատիւը կը վայելեն ազգութեան անունով: Կրօնաւորներու, անշուշտ իրենց կոչումին գիտակցելու ըսել կ'ուզեմ, դերը շատ մեծ է, վսեմ ու փշայից: Անոնք մեծ պատասխանատուութիւններ ունին Աստուծոյ և իրենց իզճին առջեւ և ասոր համար պէտք է պատրաստուիլ, զինուոր, անձնաւորաց ըլլալ, հակառակ պարագային, հորիւր անգամ տեղի լուս է այս սուրբ սքեմը վար նետել ու քար քայթակղզութեան չգտունալ: Կուսակրօնութիւնը, պարանոնք, ինչպէս դուք կ'ըսէք, կրնայ իր անպատեհութիւնները ունենալ տեղ տեղ, տեղը կամ թուլամորթ հոգիներու քով: Բայց կամպիլ կ'դերը կրնա՞ր իր մեծ գերը կատարել ամբողջ աշխարհի մէջ՝ եթէ ամուսնացած ըլլար: Սայթաքումները մարդու համար են, բարեկամներ, բայց դիտեցէք անգամ մը թէ ան ի՞նչ հրաշայի գործունէութիւն է, ի՞նչ կազմակերպութիւն, ի՞նչքան վսեմ անձնապահութիւններ:

— Գործունէութիւն ըսիք, հայր սուրբ, բայց չէ՞ք ըսեր ու բողբոջական միսիստներն ալ կը գործեն կ'որ, ամուսնացած են, բնութեան օրէնքին հաւատաւոր են:

— Այո՛ պարանոնք, Բողբոջականներն ալ կը գործեն կ'որ, բայց ողջ ըլլան ամերիկեան աղայները թող անգամ մը դրամը պատիւ անոնց քով և այն տան պէտք է գտնել զիրենք՝ առանց յիշելու կրօնական տեսակէտով, իսկայի վսեմութիւնը, որ է անձնապահութիւնը՝ կուսակրօնութեամբ ևն. ևն:

Երկու ժամ տեսած էր մեր խօսակցութիւնը: Ընդդիմաբօսութեան ազդեցութեանը տակ մուցած էինք թէ շողեռաւին մեկնելու ժամը կը հասնէր: Զգույսովս յաղթուած էինք և արդէն կրօնական այս փափուկ հարցերը ամէն հանդիպող մարդու գործը ըլլալու չէին: Մեր կօխիկէն շատ վեր ելած էինք: Գոհարափաճու ուղեկիցս կը պիտի բնութեան օրէնքին վրայ՝ իր ամուրի մեծցած մարդու աշխարհի ազատ կեանքը... իրեն փաստ ունեցած. բայց իր կ'կերտեցութիւնը ակներեւ կերպով ջախջախուած էր այդ ժամանակ:

Երիտասարդ վարդապետը ճառած էր մեզի այնպիսի շեշտով մը՝ որուն անկեղծութիւնը խիստ ուշա-

գրուէր որ ու խորունկ սքանչացումով էր որ հրաժեշտ աւանք իրմէ՝ իր մէկ Ֆրանսերէն գեղեցիկ արձակ զրուածիւնը մեծ հաճոյքով ունենդրելէ յետոյ:

Այդ երեսասորդ վարդապետը Վիքթոր Հիւկոյի Արքայ Մերեկէն կը յիշեցնէր մեզի: Եթէ եկեղեցականները ամէնքն ալ այդպէս բլրային, ինչքան մարդիկներ պիտի դադրէին կոշտ Վալմաններ մնալէ: Ինչքան հայ երեսասորդներ պիտի դադրէին ազմածութան կենցաղ մը ունենալէ, աշխարհը հոգեւոր թէ մարմնաւոր ակամքներով՝ որոնց չարազէտ հետեւ տնքները տնտեսեալ համար խորթաբախտից բնկերաբան մը ըլլալու պէտք չունինք:

Զարգացած չարային տակ ինչքան խոպանացած հոգիներ, այսօր, Աստուած իմ:

Մոլեռանգութիւնը բաղձալիք և յանձնարարելի բան մը չէ անշուշտ, իսկ ընդունեցէ՛ք թէ կրօնաւորութեան պակասէն է որ մեծապէս կը տուժէ ու պիտի տուժէ, մեր մէջ բարութեան, եզրայրարութեան և համերաշխութեան ոգին:

Պէյրուսի երեսասորդ վարդապետին շնորհալի տեսքէն մեր աշխարհիկ սկեպտիկութիւնը շատ բան կորսնցուց այդ օր: Երկուսն ինչպէս ազար կ'անհետի ձոյլուն պայծառ ջուրին մէջ, ինչպէս երկաթը որ կը կակղանայ հնոցին մէջ, ինչպէս սառնայր որ կը հալի սառնուն ցեմոյթեան տակ:

Ս. Օ.

ԱՁԳ ԵՒ ԿՐՕՆԷ (*)

Չ.

Ազգայնամոլութիւնն եւ եկեղեցական պատմութիւնը

Ազգայնութեան չափազանցութեանց սահման մը դնելու պաշտօնին մէջ՝ մարդկութիւնը երախտապարտ ընելու տախտան յաջողեցաւ եկեղեցին: Բայց թշնամին՝ այն է հեթանոսական աղփային անջատող ոգին չվհատեցաւ՝ այլ սկսու ալս անպամ ընդգլխի ուղղակի Բրիտանի հաստատած եկեղեցոյն հիմը կազմող միութեան դէմ, պառակտումներ յառաջ բերելով նոյն իսկ եկեղեցոյ մէջ, ինչպէս որ անոր վարդապետական իշխանութեան դէմ կանգնող հերետիկոսութիւնները սովորաբար ծագում առած են անհաստական հպարտ ետութենէ մը, այսպէս ալ հերձուածներն չափազանցեալ ազգայնական ոգւոյ մը արդիւնքն եղած են:

(*) Արմ. Գ. Տարեթիւ 123 ՏԷՍ էջ 759:

Այլեւայլ պետութիւններն՝ չկրնալով դիմադրել եկեղեցոյ հեղինակութեան, եւ միւս կողմանէ չուզելով զոնկ իրենց ազգայնական ոգւոյն անձուկ եւ միանգամայն անիրաւ պահանջներն՝ ուրիշ միջոց չգտան եթէ ոչ իրենց իշխանութեան տակ գտնուող ազգերն անջատել եկեղեցոյ միութենէն եւ այսպէս սով ազատիլ անոր բնոյժանութիւնը մարդկութեան համար բարերար ազգեցոյթներէն եւ իրենց քաղաքականութեան միակ ազգակ եւ գերազոյն օրէնք ճանչնալ իրենց մասնակի ազգային օգուտն:

Ամենէն առաջ Բիւզանդական Կայսրութիւնն էր որ մտաւ այս յետապիմական ճամբուն մէջ: Ի սկզբան, եկեղեցին իւր արատաքին թշնամիներու դէմ պաշտպանելու պատրուակին տակ՝ շատ անգամ կայսրները կը ջանային միջամտել նաեւ եկեղեցական խնդիրներու, բայց միջապէս կը ճանչնային թէ իրենց պաշտօնը միայն արտաքին պաշտպանութեան մը սահմանէն անդին չէր անցնէր:

Բայց վերջերս այս ուղղութիւնը բոլորովին փոխուեցաւ: Ներքին երկպառակութիւններ, ըմբոստութիւններ, ամէն տեսակ անկարգութիւններ ջլատած էին այս ընդարձակ տէրութիւնը և զայն իր կործանման եզրը հասուցած էին: Ընդարիտ ազգաւորութիւնը և սահմանափակ հարկը կը պահանջէր կայսրներէն, մեծ ճիգերով իրենց տարող ռազարութիւնը դարձնել առաջնակարգ կարեւորութիւն ունեցող շահերը պաշտպանելու: Երբ պէտք էր վարչութեան այլեւայլ ճիւղերու իրարու նկատմամբ ունեցած յարաբերութիւնները ճշդել, որպէս զի տէրութիւնը յանդգնագոյնին խաղալիք չլլար, ինչպէս քանիցս տեսնուեցան գերիներ կամ անբարոյ կիներ որոնք յաջողեցան կայսերական հեղինակութիւնը գործիք մը դարձնել իրենց կիրքերը յագեցնելու: Երբ պաշտպաններն՝ որոնց յանձնուած էր աւերութեան մեծագոյն շահերը՝ սոսկ իրենց անձնական օգուտն՝ նպատակ և քմահաճոյքն՝ կանոն կը ճանչնային, երբ գինուորական ոյժն՝ փոխանակ կայսրութեան գլուխը զրա-

նուողին հրամանները կատարելով՝ տէրութիւնը պաշտպանելու, ինքն կը հրամայէր նոյնիսկ կայսրներուն և յարստեւ յեղսոփութեանց եւ սպանութեանց առիթ կուտար, ուզած անձը կայսրութեան կը բարձրացնէր, անհաճոյ երեւցողը վար կ'առնէր. երբ հասարակաց բարքերն ծայր աստիճան ստորնացած էին. ահա փոխանակ ճշմարիտ ազգասիրութեամբ մը այս ամէն անկարգութեանց առջեւն առնելու և չորս կողմէն շրջապատող թշնամիներու զինադրելու հնարը խորհելու՝ Բիւզանդական կայսրներու կարծես սամեսամեծ զբաղումն եղած էր Եկեղեցական իշխանութեան դէմ մաքստիլ, անոր ազդեցութիւնը կտորելու ջանալ, իրենց չվերսրերած կրօնական վէճերու թեր ու դէմ միջամուխ ըլլալ, վճիռներ տալ՝ ըստ հեթանոսական սկզբունքին թէ կրօնքն ևս ազգային վարչութեան իբր մէկ ճիւղը ըլլալով, կայսեր կամքն պիտի ըլլար անոր ալ գերագոյն օրէնքը որուն պատրաստ էին հնազանդիլ հպատակները, եւ երբ Քրիստոսի ճշմարիտ ոգին ունեցող Հայրապետներ քրիստոնէական անկաշկանդ ազատութեամբ մը և կեղեցական իրաւանոյ սահմանները պաշտպանելու ըլլային, այդ մեծ յանդգնութիւն մը և կայսրներու իշխանութեան դէմ սանձգութիւն մը կը համարուէր և անմիջապէս պաշտօնանկութիւն, բանտ, աքսոր ամէն ինչ պատրաստ էր:

Այսպէսով Արեւելեան Եկեղեցին երթալով տկարացու և կամաց կամաց ազգային Եկեղեցի մը ըլլալու ճամբուն մէջ մտաւ, հլու, հնազանդ հպատակ մը ըլլալով Կայսրներու աստուածային կամքին, ըստ հեթանոսական ոճին:

Սակայն այդ վիճակին մէջ կարելի չէր պահել քրիստոնէական ընդհանուր միութիւնը: Փառաւոր անցեալ մը ունեցող այդ Եկեղեցւոյն՝ ազգայնացման շաւղին մէջ թաղուելով կործանման առաջին առնելու համար՝ ընդհանուր Եկեղեցւոյ Քահանայապետը ձայնը բարձրացուց, բողոքեց կայսերական անիրաւ ոտնձգութեանց դէմ, քաջալերեց, կաղաւթեց Եկեղեցական իրաւանոյ

հաւատարիմ ախոյեանները, այս ամէնը, պարագաներու և բնաւորութեանց համաձայն, երբեմն մեծ կորուլով մը, երբեմն նիւնայի հեղութեամբ և երկայնամիտ համբարութեամբ, յայտ միշտ անկաշկանդ ազատութեամբ: Այո, պատերազմը եղաւ, Ուղղփառ Եկեղեցին զարհուրելի օրեր անցուց, անոր Քահանայապետները բռնի յալիւտութեան, Պոլիս բերուեցան, բանտարկուեցան, աքսորուեցան, թոյնով սպաննուեցան, և այս ամէնը գործադրուեցան տկար, ուժասպառ ծերունիներու վրայ, և սակայն կարելի չեղաւ Եկեղեցւոյ ազատութիւնը ձեռնակապել, ահա այն ժամանակ երկարորէն պատրաստուած հերձուածն մէջսող ելաւ. որով Արեւելեան Եկեղեցին բաժնուեցաւ Քրիստոսի հաստատած միութենէն. Քրիստոսի անունը պահուեցաւ, բայց այլևս Քրիստոսի Եկեղեցին չէր, չունէր այլևս Քրիստոսի ոգին, վասնզի Քրիստոսի վարպետութիւնը ենթարկուած էր Կայսրներու իշխանութեան՝ որոնք էին այլևս անոր գերագոյն դատաւորները՝ հակառակ նոյն ինքն Քրիստոսի պատգամին. Տո՛ւ գԿայսերն՝ Կայսեր, եւ զՍոսուծոյն՝ Ասոսուծոյ:

Այս Կայսերական Եկեղեցւոյ սկզբունքէն՝ յտա՛ջ եկաւ ազգային ինքնագլուխ եկեղեցիներու սկզբունքը, որ զմեզ կը վերադարձնէ հին ազգերու կրօնական վիճակին, հոր իւրաքանչիւր պետութիւն իւր ուրոյն կրօնքը կ'ունենար, սկզբունք՝ որու պտուղները այսօր կը տեսնենք, Ֆանարական, Հելլենական, Ռուսական, Պուլկարական եւ այլն եկեղեցիներ, որոնք իրարմէ բոլորովին անկախ եւ շատ անգամ քաղաքական շահերու բերմամբ՝ իրարու հակառակորդ եւ թշնամի, զիրար կը բանադրեն:

Դալով այս եկեղեցիներու բարոյական հեղինակութեան եւ ազդեցութեան, բաւ ըլլայ յիշիլ նշանաւոր գաղղիացի մտածողի մը՝ Պրիւնիթիէի սա խօսքերը. «Եկեղեցի մը չի կրնար ազգային ըլլալ, եթէ ոչ իւրացնելով ժողովրդեան մը նախապաշարունակները, կիրքերը, շահերը եւ եթէ համարձակիմ ըսել՝ նոյն ժողովրդեան խառնուածքը: Կրօնք

մը չկրնար տեղական ըլլալ, եթէ ոչ ուրա-
նալով իւր գոյութեան իսկ պատճառը, որ
է ցեղերու զանազանութիւններէն եւ պատ-
մական սահմաններէն անցնելով ընդհանրու-
թեան ձգտիլ: Ազգային կրօնք մը ստիպեալ
նախանձոտ կրօնք մը, կասկածի եւ աստ-
լութեան կրօնք մըն է, որոյ ողին հակառակ
է կրօնքի գաղափարին: Եթէ տէրութեան
նկատմամբ ունեցած պարտաւորութեան բե-
ռան տակ՝ իւր բարոյականն ընկճուած չըլ-
լայ իսկ, ազգայնութեան պարտաւոր եղած
իւր զիջումներէն, դարձեալ պիտի մթափնէր՝
եւ ի հարկին՝ մոլորէր»:

Ահա ուր հասաւ Արեւելեան եկեղեցին
ազգայնութեան չափազանցեալ ոգւոյն ազ-
գեցութեան տակ. եւ սակայն՝ նախնի Բրիտ-
տոնէութեան համաժողովներու հանգանակ-
ներու համաձայն կը շարունակեն դաւանիլ.
«Հաւատամք ի մի Կաթողիկէ եկեղեցի»:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՏԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻՒ՝ ԳՐԲԷՆ

Գրք Ա. — Գլ. ԺԸ. — Ս. Հարց օրինակներու վրայ:

(Շար.)

Բոյր ժամանակը օգտակարապէս կ'անցընէին. Աս-
տուծոյ հետ զբաղելու համար գործածուած ամէն ժամ
կարճ կ'երեւար. ու երկնաւոր իրաց յափշտակութեան
մեծ փառքութեանը պատճառաւ կը մոլորուէր նաեւ
մարմնաւոր կեանքոյ պէտքը:

Անոնք կը հրաժարէին ամէն հարստութենէ. աւա-
զուրիւններէ, պատիւներէ, բարեկամներէ ու ազգա-
կաններէ. ոչինչ կը ցանկային ունենալ սոխաւորիս, հա-
զիւ հեանքի կարեւոր քաները կ'ստեղծէին. ցաւ կը զգա-
յին մարմնոյ ծառայելէ, նոյն իսկ ի հարկաւորութեան:

Աղիաս կ'իմ ուրեմն երկրաւոր քաներու մէջ, բայց
չաւ հարուստ՝ շնորհաւ եւ առաքինութիւններու մէջ:

Արեւմտեան կարծիքն, սակայն ի ներքուստ կը կազ-
դուրեւէին աստուածային շնորհոք ու միաբարեկամութիւն:

Ս. ՅԲԱՆԶԻՍԿՈՍ ՔՍԱԻՆԵՐԵԱՆ

ԱՌԱՔԵՒԱԼ ՀՆԴԻԿԱՍՏԻՆԵՐ

Ս. Յրանչիակոս Քսաւերեան ծնաւ, 1506, Ապրիլ
7ին, Ապստոլի Նովորոս գաւառին մէջ, Հայրը Տոն
Ժոն Ժոս, աւագ նախարար մըն էր. մայրը, Մարի,
միակ ժառանգն էր Ազգիկէթ եւ Քսաւերեան տոհ-
մերուն, որ տէրութեան ամենէն նշանաւորներն էին:
Իր հայրենիքին մէջ նախնական ուսման քննորդ սովոր-
ւէն վերջը, Փարիզ գնաց իմաստասիրութեան գասըն-
թացքին հետեւելու համար: Հոն այնպէս յաջողեցաւ
որ շրջանը աւարտելէ յետոյ արժանի դատուեցաւ
Պովէի դպրոցին մէջ ուսուցանելու ինչ որ ինք նոր
սովորած էր:

Ս. Իգնատիոս ալ նոյն միջոցին Փարիզ հասաւ իր
ուսման քննորդ կատարելագործելու համար: Ձեռք զարկաւ
համոզելու Քսաւերեանը որ իր հիմնելիք ընկերութեան
մէջ մտնէ: Եւ, տեսնելով թէ ան փառասիրութեամբ
լեցուած է, այնքան ստեղծ անոր կը կրկնէր Յիսուսի
սա խօսքերը. Ձինչ օգտիցի մարդ եթէ զաւթարհաւ ամե-
նայն ժամեցի եւ զանձն իւր տուեցի, որ վերջապէս
համոզեց զանկիւր իրեն հետ աւետարանական
կեանքի մը ձեռնամուխ ըլլալու եւ մեղաւորները
դարձի բերելու զսեմ գործին նախընտրելու:

Այսքան մեծ վարպետի մը տեսչութեան տակ
հոգեւոր կրթութիւն ընէր, առատաճ հոս արտասու-
քով եւ խիստ ապաշխարութիւններով իր անցեալ
կեանքին յանցանքները քաւելէ՝ վերջապէս իր ուսու-
ցած իմաստասիրութեան ընթացքը աւարտելէ եւ
Աստուածաբանութիւն սկսելէ յետոյ, Ս. Իգնատիոսի
եւ ուրիշ հինգ ընկերներու հետ, 1534ին, Վերափոխման
տօնին օրը, ուխտ ըրաւ անցնելու ըստ կարի փութով
Սուրբ Երկրը, եւ հոն ձեռնադրու ըլլալու օտարին լու-
ծին տակ հեծող Քրիստոնեաներուն, եւ եթէ տարի մը
սպասելէ յետոյ հնար չըլլայ այս ճամբորդութիւնը
ընել, երթալու ինչաւ Ս. Քահանայապետին ոտքը,
գնելով ինքզինքնին անոր արամագրութեան տակ, որ-
պէս զի յարմար տեսած տեղը զրկէ զիրենք՝ Եկեղեց-
ւոյ ծառայելու համար:

Այս ուխտէն ետքը, իր աստուածաբանական
ուսման քննորդ աւարտեց: Ապա Փարիզէն իր ընկեր-
ներուն հետ մեկնեցաւ Վենետիկ ուսկից նաւ մտնե-
լու էին: Այս քաղաքին մէջ բնակեցաւ Անրուժեկեաց
անկեղանոցը եւ հոն գիշեր ցորեկ մտնելու հետեւ-
ները՝ մարմնական եւ հոգեկան ամենէն գործիքս խոստ-
ներով: Զգուանք կ'ազգէր իրեն գարշտոտեմի վերք
մը. իր ամբողջ ուժերը ամփոփեց, խեղճ հիւանդ
գրկեց, շրթունքները դրաւ անոր վերքին վրայ: Ժծեց
անոր հիւլը (այս պարզ պատմութիւնն իսկ մեր
տկարութիւնը կը ստեղծէ): Եւ այնուհետեւ բուն մը
դժուար չեկաւ իրեն: Երկու ամիս մաշգոսիքական
գործերով զբաղելէ յետոյ, Ս. Իգնատիոսի միւս աշա-
կերտներուն հետ Հռոմ գնաց. Ս. Իգնատիոս միայն
Վենետիկ մնաց, Հռոմի գլխաւոր եկեղեցիները այցեց:

լեց: Շատ անգամ պատիւ ունեցաւ Պօղոս Գ. Քահանայապետին հետ խօսելու. Ա. Երկրի ուղեւորութեան համար անոր օրհնութիւնը առաւ, և իր գեռ ոչ քահանայ ընկերներուն համար հրաման ստացաւ Ա. Աստիճանները ընդունելու:

Վերջապէս հոգւոյ փրկութեան նկատմամբ նոր եռանդով մը վառուած Վենետիկ դարձաւ, ուր իրեն կը սպասէր Ա. Իգնատիոս: Հոն հասնելուն պէս մշտնջենաւոր աղքատութեան և ողջախոհութեան ուխտերը ըրու, միաներուն հետ, Քահանայապետական նուիրակին առջեւ, և նորէն անբուժելիաց անկեղտնոցը մտնելով շարունակեց իր գուրգուրոտ խնամքները մինչեւ նաւագնացութեան ժամանակը: Այս միջոցին պատերազմ ծագեցաւ Վենետիկեաց և թրքաց միջեւ, և Արեւելքի ճամբան փակուեցաւ մեր անձնանուէր ուխտաւորներուն առջեւ. ուստի ստիպուեցան ուրիշ միջոցներու ձեռք գտնելու: Ա. Ֆրանչիսկոս՝ ընկերին աւելի օգտակար ըլլալու համար, պատրաստուեցաւ Քահանայական աստիճանը ընդունելու, դոր իրօք ալ ընդունեցաւ քարեպաշտութեան և երկրագործութեան անընդատրելի զգացումներով: Քահալքը իրեն այնքան յորմար չեկաւ պատարագ գուրցելու պատրաստուելու: Ուստի Կատուայի մօտ աւելրակ հիւր մը քաշուեցաւ և քառասուն օր անընդհատ առանձնութեամբ ապրեցաւ: Յետոյ երկու ամիս պարպեցաւ քարոզելու և քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնելու շրջակայ աւաններուն և գիւղերուն մէջ: Վերջապէս իր առաջին պատարագը ըսաւ Վիշնցայի մէջ ուր տարաւ սուրբ Իգնատիոս իր բոլոր ընկերները: Եւ այս առաջին պատարագին մէջ այնքան յորդ աղցունք թափեց որ ներկաները չկրցան արցունքնին բռնել:

(Շարունակելի)

ԼՈՒՒ ՎԵՅԵՆՈՅԻ ՆԵՐԲՈՂԸ (*)

(Շար.

Ընկերական Իրաւունքի եւ Պարտքի կաթողին սէրը միջամուխ ըրաւ զինքը երկրորդական ուսուցման ի նպաստ երկար եւ յաջող պայքարի մը: Եպիսկոպոս մը, ճարտարախօս մը, օրագրող մը, Փարիզի Գերապայծառը, Մոնթալամպէր, Վէօյեօ, — որոնց միջոցաւ վերջերը՝ երկու պետական մարդիկ, Թիէռ եւ Ֆալու, պարզ մեծահամբաւ քահանայի մը՝ Տիւրիանիլի հետ — նոյնին գիւցաղները եղան: Այս զինակցական եղբայրութեան սկիզբը շատ հաճոյական եւ ախորժելի եղաւ: Այս երիտասարդ զոյգը, կարի

աշխուսագեղ, քրիստոսապանծ որոնց խօսքը սրալախ սուրի մը պէս կը հնչէ. այս երիտասարդ նորադարձը որ հայրենիքին առջեւ պարզած գաղափարները շնորհքով, կորովով եւ համոզումով կը պոսկէ, այս ալուոր եպիսկոպոսը, յանդուգն եւ իմաստուն, կը յառաջանան ասպարէզին մէջ ձեռք ձեռքի տուած յուշիկ՝ եթէ յուշիկ պէտք է, արապ՝ եթէ արապ պէտք է, առանց ընկրկելու. ճակատնուն վրայ կրելով այնպիսի յանգիւնութեան ճառագայթ մը, եւ շուրջերնին ծաւալելով սուրբ եւ զուարթ ազատութեան այնպիսի թարմ շունչ մը որ զանոնք զիռնելով, նոյն իսկ շատ հեռուէն, երբեմն աչքերնիս արցունքով կը թրջի եւ կը ստիպուինք ցաւելուոր ինչո՞ւ այս սիրալիլ ընկերակցութիւնը չունեցաւ աշխարհիս ամենէն աղուոր բաներուն գերագոյն պատիւը, որ է գերեզմանին մէջ միայն վերջ գտնել:

Այս միջոցին Պիոս Թ. կը բազմէր առաքելական գահին վրայ: Լուին գրաւած էին անոր բարձր առաքելութիւնները, հաստատումութիւնը, ընտելական խօսքը, քաղցրութիւն կամ աւետարանական բարկութիւն ցայտող աչքերը, գորովը եւ ծերութիւնը, որուն տարիները կ'երկարէին աստուածային նաւակին զեկին մօտ, եւ նոյն իսկ Պետրոսինը կը զլէին կ'անցնէին: Արդ ճշգրիտ Կաթողիկէութիւն չէ՞ Քահանայապետին ճամբաներէն ընթանալ, անոր յարիւ, խելամուտ ըլլալ անոր վարդապետութեանց, անոր յօթարութեանց, անոր փափաքներուն. «Արածեա՛ զգառնիս իմ, արածեա՛ զոչխարս իմ» ըսաւ անոր Յիսուս: Գառներն ու ոչխարներն որ կը հեռանան Հովիւէն, կը մուրդին:

Արդ Պիոս Թ. կրօնի տեսակէտով, փառաւոր օրեր տեսաւ: Իր Վարդապետի եւ Ընդհանրական Հովիւի հանգամանքները անհամեմատ չքով երեսան եկան. 1854ին Անարատ Յղութեան վարդապետութեան վճռով. 1870ին Քահանայապետական անուխալութեան վճռով. 1864ին Սիլլապուսի հրատարակումով: Քաղաքական տեսակէտով, իրրեւ ժա-

(*) Տես թիւ 129, էջ 26

մանակաւոր վեհապետ, մարտիրոսի կեանք մը ապրեցաւ :

Վէօյեօ անոր թէ աղէկ թէ աւեր օրերուն՝ հարազատ զաւակ մը եղաւ : «Փոյթ տարաւ իր հոգւոյն ամբողջ հոանդովը, կը գրէ Պիոս Պիոս Ժ. , Փարսառել Կալիփանիդ մի նախապաշարումները եւ մարտութիւնները եւ միծապէս նպատեց դէպի առաքելական վաճը տեղի ունեցող շարժումին :»

Այս խանդավառութիւնը իրեն շատ սուղի նստաւ :

1860, Յունուար 28ին, Լուի կանչուեցաւ Առաքելական Նուիրակին կողմէ : Նուիրակը ձեռքը բռնած էր Նուլիս չեքթ կոնդակը : Պիոս Թ. անոր մէջ նշուակեալ էր Յեղափոխութեան կողմէ Ռոմանիայի մէջ պործուած սեղանակապոս դաւերը, եւ մերժեալ էր եղած իրողութիւնը ընդունելու խորհուրդները, զորս Ֆրանսացւոց հօգո Վայսըր իրեն տուած էր նոյն ամսուն առաջին օրը : Այս խորհուրդները, կը յայտարարէր Ս. Բահանայապետը, հակառակ եւ Ս. Գահուն իրաւանց եւ արժանապատուութեան :

— Կ'ուզե՞ս հրատարակել, հարցուց Նուիրակը :

— Պիտի հրատարակեմ :

Քառորդ մը յետոյ, Վէօյեօ կը մտնէր խմբագրութեան սենեակը : «Ահաւասիկ մահավճիւր, կ'ըսէ : Օրութիւնը վաղը պիտի դադրի ապրելէ :» Յաջորդ առտու, իրօք Նուլիս չեքթ կոնդակը երեւցաւ : Իրիկունը բարապան մը թուղթ մը բերաւ պետական գիււանէն :

Չորս տող :

«1852, Փետրուար 17ի բարեկարգական վճռին 32րդ յօդուածը նկատի առնելով,

«Վճռեցինք եւ կը վճռենք հետեւեալը :

«Իւնիվէր օրաթերթը խափանուած է :

«ՆԱՓՈՒԼԻՆ»

Սպառազէն զինուորը յանձն առած էր առանց ճակատը կնճռելու հարուածուիլ հնազանդելու համար, սիրելով, ծառայելով : Խիստ էր, այս : Բայց գեղեցիկ էր :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՒՄ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Ս. Քահանայապետը, Յունուար 12ին ունեցեալ թեմական ժողովեցաւ Լուի Եպիսկոպոս Գոսմոս Կերպարածառը :

Վերջերս Միլանի թեմին Մանգա քաղաքին մէջ վախճանեցաւ Տոմ փեռ Պոպիլիօ տիպար քահանան 40 տարեկան հասակին մէջ : Յուզարկաւորութեան կը մատակցէր 30,000 Լուի բազմութիւն մը : Հասկուցեալը՝ Վսեմ. Ֆէլլարի Կորդինալին կողմէ իրեն աշխատանքի առաքեալ Մանգա զրկուած էր, հոն գործաւոր գասակարգը կազմակերպելու համար : Եւ իրօք Տ. Փ. Պոպիլիօ յաջորած էր այս 50,000 բնակիչ ունեցող քաղաքին մէջ կազմել Կաթոլիկէ բանուորներու և բանուորահինու Սէնտի-քաներ որոք փչած էին ընկերվարականներու բռնութիւնը : Տ. Փ. Պոպիլիօ իր անբռնջ աշխատութեան շնորհիւ հաստատած էր ժողովրդական դրամատուն մը, և շարաթափելով մը կը հանէր : Ինաւ շէր նայէր իր շահուն, բարեպաշտ էր, ընկերասէր, խոնարհ, առաքելաշնորհ, քահանայ բառին բովանդակ առումովը : Աւանց իրեն հիմա Մանգա քաղաքը Լնկերվարականներու որջ մը պիտի ըլլար :

Կերմանիոյ Կաթոլիկէ Եպիսկոպոսները հաւաքական թուղթ մը հրատարակեցին որ Յայտնութեան առաջին և երկրորդ կերպիները կարգացուցաւ Եկեղեցիներու մէջ : Այս հոյակապ թղթին նիւթերն են հետեւեալ կարեւոր խնդիրները. 1. Մշակութիւնը նուազումը. 2. Սեռային հարցերու մասին երիտասարդութեան գիտակցութիւնը. 3. Շարժանկարի թաղանթները. 4. Երիտասարդական ընկերութիւնները. 5. Նորաձեւութիւնը և արգելադրել :

Պիլիքայի Եպիսկոպոսները հաւաքական թղթով մը գատապարտեցին կանանց արգելադրի յարաճուն անպարկեշտութիւնը և վատթարացուցիչ պարերը, որ կը սպառնան վարակել Քրիստոնեայ միջավայրերը :

ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Այս տարի եւ ըստ սովորութեան Յայտնութեան և Մկրտութեան տօներուն առթիւ Յուլիոյ Վ. Մարտիոն կեդրոնական բանտին մէջ եղող սովորութիւն բանտարկեալները այցելելով, հոն տեղի մատրան մէջ Ս. Պատարագ մատուց և բանտարկեալները հոգեւորապէս մխիթարեց : Պատարագէն յետոյ Յիսուս Փրկիչ Մայր Եկեղեցւոյ թաղականութեան կողմէ յանձնուած բաւականաչափ գումար մը բաշխեց, զոր բանտարկեալները երախտագիտութեամբ ընդունելով բարերարաց համար աղօթքներ ըրին : Կեդրոնական բանտի պաշտօնեաները Հ. Կաթոլիկէ բանտարկեալներուն հըռ հպատակութեան նկատմամբ շատ մեծ գոհունակութիւն յայտնեցին :

ՆԵՐՐԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Արեւելեան Անատոլի բարենորոգմանց յօրացրին վիճելի կէտերուն մասին բանակցութիւնները դեռ կը շարունակուին:

*. Յունաւոր Այն անձանց մէջ մը Շէրիֆ փաշայի Բարիդի բնակարանը մտնելով զէնք պարպեր է և փաշային ծառան վերաւորելէ ետքն ինք ալ իրեն վրայ արձակուած զնդարներէն սպաննուեր է:

*. Հելլէն նորբնութիւն զեապան Մ. Բանաս Պրիւս ժամանեց և Սիէնքի Օսմ. զեապանն ալ իր պաշտօնավայրն ուղիւ օրած ըլլալով, երկու երկիրներու միջեւ գիւնադադարական յարաբերութիւնները վերահաստատուեցան:

*. 700 միլիոն ֆր. փոխառութեան մասին Բարիդի բանակցութիւններն եթէ չյաջողին, ամերիկեան խուճի մը հետ բանակցութիւն պիտի ըլլայ 600 միլիոն ֆր. փոխառութեան մը համար: Ամերիկեան այդ խուճիէն երեք պատուիրակ արգէն Ա. Պրիւս եկած են և կառավարութեան անդամի մը հետ կը բանակցին:

*. Օսմ. կառավարութիւնը յաւատարեց թէ Լիման փաշայի պաշտօնն է լոկ քննել զօրարանակը:

*. Ձայք կ'ըսէ թէ գերման զնուորական մարմինն ինդրոյն մէջ Գերմանիոյ պարտութիւնը զպայթ պատճառած է Պերլինի քաղաքական շրջանակներուն մէջ: Ոմանք կ'ըսեն թէ արտաքին գործոց նախարար Ֆոն Եակով ու խորհրդական Զիմերման այդ պատճառով հրաժարած են: Թէեւ առաջին ակնարկով Օսմ. կառավարութիւնը պատասխանատու կը նկատուի ռուս տեսակէտն ընդունելուն համար, սակայն կ'ըսուի ալ թէ գերման կառավարութիւնն եթէ խտրել գործէր, Բ. Դուռն ետ պիտի չկենար:

*. Մ. Տէքուսէի տեղ փէթէրապուրկի Ֆրանսական զեապան անուանուեցաւ Մ. Փալէոլոկ:

Սօֆիոն Յունուար 49.

— Ընտրական պայքարը սկսած է: Կառավարութիւնը յայտարարութիւն մը հանած է ըսելով թէ

երկիրը զօրաւոր կառավարութեան մը պէտք ունի, եթէ կ'ուզէ ներքին և արտաքին խաղաղութիւն վայելի և կը հրաւիրէ հետեւաբար բնորոշները որ կառավարական թեկնածուներուն տան իրենց քաւները: Ընկերավարականները ազգու յայտարարութիւն մը հրապարակած են Հանրապետութեան հաշակոյ մը պահանջով: Ընկերավարականները կը յայտարարեն թէ մինչեւ վերջ պիտի պայքարին այդ նպատակաւ, նոյն իսկ եթէ հարկ ըլլայ հանրապետութիւնը ձեռք ձգել ի գին յեղափոխութեան մը:

*. Վիւքէն և Սթիւթին նաւարանները ծով իջեցուցած են Յունաստանի հաշակոյ շինուած և լծարկելանաւեր, որոնք Քիէլի ջրանցքով Յունաստան պիտի բերուին:

*. Վիեննայէն կը հեռագրեն թէ Ալպանիոյ մէջ կացութիւնն աւելի անորոշ ու կնճառաւ ընթացք մը կը ստանայ Լյատա փաշայի երկղիմի ընթացքէն. վասն զի մէկ կողմէն իշխան Վիտո կուսակից կը հանդիսանայ և միւս կողմէն կ'աշխատի իր անձնական զորքն ամրացնել զիստրականապէս: Ո՛չ Իտալիա և ո՛չ ալ Աւստրիա կրնան զօրք զրկել Ալպանիա. վասն զի շատ վտանգի պիտի ենթարկուին, կամ թէ բաւական զօրաւոր ըլլալու են ամէն տեսակ յարձակումներու դիմադրելու համար: Այդ պարագային զօրաբանակներու պէտք պիտի ունենան: Իշխան Վիտ Ալպանիոյ մէջ գտնելիք միջոցներուն վրայ միայն կրնայ վստահիլ, ուր գիւրաւ պիտի կրնայ քիչ տեսնէն կազմել բազմամիջիւ, մարզուած ու հաւատարիմ զօրքերու մարմին մը:

*. Իշխան Վիտ տպահովութիւն ստացաւ թէ տէրութիւնները պիտի երաշխաւորեն փոխառութիւնը: Իշխանը փեսար. Վէն 5 (Ն. Տ.) պիտի կրնայ ճամբայ ելլել: Իշխանը դիտէ թէ հոն ժամանելուն օրքան իր ժողովրդեանց պիտի ենթարկուի, սակայն վստահ է որ միայն իր ներկայութիւնը բաւական պիտի ըլլայ անխիտանութեան վերջ մը տալու համար, մանաւանդ Վալոնայի մէջ, որով կ'ուզէ շուտով ճամբայ ելլել:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	49
Յիսուս Քրիստոս	51
Երանելի Տէր Կոմիսսա Նահասակին պատմական երկու գրութիւնները	52
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Մկրտութիւնը	55
Պէյրուք	57
Ազգ եւ Կրօնք	59
Եօթնեակ Քրիստոսէի	61
Լուի Վէյոնիյի ներքորդ	62
Տեղեկագրական	63

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

Տպագր. Գ. Արճապանց Երաւարքերի, Քերտ, Պարսկ փողոց Եւ Ե. Կ. Պալիս

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆԴՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.:—Արժանա-
ման՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոչիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու ե
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատիւն: 4.—
Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մատնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Բրիտ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կովստաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէաներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախողները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : 'L. Schottenring'

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zittau.

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.